Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա պանծալի խորհրդով շնորհավորում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին:

Սիրելի ժողովուրդ հայոց, Բարձրյալի ողորմությամբ խաղաղ երկնքի ներքո փոնում ենք հայրենի մեր պետականության վերականգնման փասներկուերորդ տարեդարձը: Այսօր օրհնում ենք սեպտեմբեր 21-ի այն ավետաբեր օրը, երբ մեր ժողովուրդը միասնաբար ընտրեց ազատ ապրելու իր իրավունքը:

Արդարև, ազատ է մեր Հայրենիքը հայրենյաց սուրբ արժեքներով ապրելու, իր վաղվա նոր օրը կառուցելու, ազատ է՝ աշխարհասփյուռ իր զավակներին հայրենի տան հարկի ներքո խնդությամբ ընդունելու, ազատ է՝ իր սրեղծագործ ոգու արգասիքները բերելու ժողովուրդների ու պետությունների բարեկամությանն ու համագործակցությանը: Հավատարիմ մնանք մեր ընտրությանը, լինենք ասպվածապարգև մեր երկրի տերն ու բարի տնտեսը և մեր գործերով, մեր սիրով ու նվիրումով արդյունավորենք նրա ամեն օր:

Փա՜ռք Հայաստանի ազատությանն իրենց կյանքը նվիրաբերած հայորդիներին:

Փա՜ռք ազատ Հայաստանի նոր կյանքը կառուցող աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Իջման Սուրբ Սեղանի առջև աղոթում ենք Բարձրյալին, որ Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո միշտ խաղաղ պահի մեր Հայրենիքը և առաջնորդի դեպի շինություն ու բարօրություն:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենասնան. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
21 սեպտեմբերի 2003 թ.